

ՄԵՐ ԿՐԻՄԱՆ ԿՐԻՄԻՆԱԼ ԿՐԻՄԻՆԱԼ



ՃԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Լր. տարեկան

Հասցե՝

Ред. на в. "ВЕРАДЗНУТІОНЪ" — Русе

Réd. du jour. "VERADZNOUTIOUN" Roustchouk

ՆԱԶԸՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ-ՆԵՐՈՒՆ ՆՈՐ ՈՃԻՐԸ

ՍԱԳՈՒՆԻ ՍՊԱՆՈՒԱԾ

Վերջապէս թրքական անարգ գործակալները հասան իրենց նըպատակին... Հայկ. Յեղափոխութիւնը մեր սիրելի ընկերի վաղահաս կորուստովը՝ ծանր հարուած մը կրեց, և այդ հարուածը հասցնողը, մի՛ վարմանար, ընթերցող, նոյն այն սողուններն են, որոնք վաղուց իվեր երգնցած Հայկ. Յեղափոխութիւնը և մասնաւորապէս Հնչակեանութիւնը կործանելու՝ այսօր կը կատարեն իրենց քսամանի խոստումը Յեղափոխական Գործին է՛ն անձնուրաց և եռանդուն մշակներուն կեանքի արեւը խափանելու ահռելի ոճիրը գործելով:

Այս թո՛ղ հրճուին անոնք, այդ արիւննուշտ գազանները իրենց սազմանուած դաւաճանի պատեանին մէջ, ա՛յն ներքին գոհունակութեամբ՝ թէ կը յաջողին իրենց հարապատ հօրը, — կարմիր Սուլթանին, — փափաքները գոհացնելու...

Նեցին թրքական հայ գործակալները, դեռ շատ պիտանի էր թէ՛ Հայկ. Յեղափոխութեան և թէ՛ մեր այն բաղձաշարը Հայրենիքին, որ Սադուլի նման անձնուէրներու կարօտը կը քաշէ... Ողբա՛, հայ ժողովուրդ, այդ անձնապէս զուգիւր մաշը և դուք, լացե՛ք հայրենիքի արիւնտ սարեր ու ձորեր, որ կը կորսնցանէք... ձեր կարօտէն տոչորուող յանգուզն ու անվեհեր կտրիճը... գիտակից Յեղ. զինւորը...

Իսկ... և ի՛նչպէս պատու ու կիզիչ է այն մտածումը որ մեր միտքը կը գրաւէ. Սադուլին սպանուի... հայ դաւաճան բաղուէք մը... միջոցաւ ուսուսկան մտորակը և թրքական զընտանը վերապահուած էին անոր Զէ՛, սարսաղագեցիկ է այս... կոտորէ՛ր այն ձեռքը, որ բուն թշնամիի գերը կատարեց...

Կը խոնարհինք քու շիրմիք առաջ, անգին ընկեր, խոստանալով քալել ա՛յն ճամբէն, որ թէև փշոտ՝ բայց քաղցր էր քեզի համար...

ՍԱՂԱԹԻԷԼ ՍԱԳՈՒՆԻ ԻՐ ԶԵՄԱՐԻՑ ԶԵՂԱՓՈՒԱԿԱՆ

Յոյց տալու համար թէ իսկապէս ողբալի կորուստ մը ունեցած է Հայկ. Յեղափոխութիւնը՝ ընդհանրապէս և Հնչ. կուսակցութիւնը՝ մասնաւորապէս, իր իսկ Սադուլի տողերով (գրուած 1903 փետր. 17/2 մարտին ընդարձակ նամակի մը մէջ) աւելորդ չենք համարեր հոս պատկերացնելու իր գաւանանքը դէպի Գաղափարի ընկերը, որով իրայտ կուգայ յանձին Սադուլի ճշմարիտ ու անձնուրաց յեղափոխական տիպը:

Ահա՛ այդ տողերը. «Սիրելի ընկերներ, նախ մի քանի խօսք՝ իմ հասկացողութեան և ըմբռնումի մասին դէպի Գաղափարի ընկերը:

Գրողին, իմ հասկացողութեանը եղել է, եւ է՛, ամեն ինչ գոնե՛, եմ թողնում եմ այն, թէ ցարք որքանով կարողացել եմ ես հաստատել մնալ իմ այդ հասկացողութեան և վնաս, միայն թէ, մի այդպիսի վճիռը, իմ հասկացողութեամբ, անհրաժեշտ է այն Մեծ նպատակի ու գործի նանդէպ, որին ձեռնամուխ եղած ենք մենք. այդպէս ես չեմ հաւատում նրա յաջողութեան:

Մի այդպիսի վճիռ, պիտի կայացած լինի առանց որեւէ փոխարկութեան ու վարձատրութեան, նոյն իսկ որեւէ գովասանքի արժանանալու ազնկալութեան, եւս պիտի կայանայ ներքին մղումի և բաւական ցանկութեամբ ազդեցութեան տակ, որի քէպտում, ամեն նեղութիւն և զոհողութիւններն այն կը վարձատրուի այն ներքին հոգեկան բաւականութեամբ, որը կը պայքարեցրուի իսկ հակառակ պարագային, եթէ գործիչը հրապարակ կը ցայ որեւէ չարով հետը ընթելով վերին նշկատութիւնից, այն ժամանակ, չեմ կարծում որեւէ բաւարար հետեւանք կամ արդիւնք կարելի լինի ակնկալել այնպիսի գործիչից, որը ինչպէս ասացի՝ կը գործէ զանազան նշկատութիւնով:

Այս ահզից պիտի հեղուցեմ կարծուած, որ այն ներքին մղումը, որը ընդունակ պիտի լինի անհատին վրձուել տալ ամեն ինչ գոնե՛, ի բաց չառնելով և իւր անձը, այդ պիտի լինի անկեղծ և անսահման սերը, դէպի նըպատակը, դէպի գաղափարը:

Սէր՛, անա այն ամենակարող ուժը՝ որը ընդունակ է միայն սեփական կեանքը գոհելով՝ ամենաբարձր ատաբիտութեան ընդունակ գարձնել անհատին: Այդ սէրը՝ իմ կարծիքով չէ սահմանափակուած միմիայն նպատակի շուրջը, այլ նա անդադարում է ևս դէպի այն անհատները որոնք տողորուած են հասնանման մոքերով, որոնց ջերմաչափի սնդիկը միեւնոյն աստիճանի ճնշում է կրում իւր վրայ. — այդ էլ ընկերի սէրն է, բայց անկեղծ ընկերի սէրը, որը այնքան քաղցր է, այնքան վեհ է, որը բացի ուժ ու նեցուկ լինելը, ընդունակ է անհատին անհաւատալի թոյնները, հրաշքներ գործել տալ. թշուա է այն մարդը, մասնաւոր գաղափարի զինուորը, եթէ չէ ճաշակել, չէ կրել իւր մէջ այդ ամենաբարձր և անփոխարինելի երջանկութիւնը... ես ունեցել եմ այդ հրաշալի վայրէջանները... առանց նրան գործը մեռած է, գաղափարը անիրագործելի և ամեն ինչ մահացութեան դատապարտուած: Ի՞նչ չէ պատահել խաբել, չանագործել և չլին:

Թո՛ղ նորից մեզ մեր հանրապարհին հանդիպեն դաւաճաններ. թո՛ղ մեր բնկեր կարծանները դուրս գայ արտափելի հրէշներ և մենք մեզ խաբած զգանք. հոգ չէ՛. այնու՛ նամենայնիւ, մենք պիտի կարողանաք հաւատալ, թէ անկեղծ ընկերներ ձեռնարկելու սիրենք նրանց բովանդակ սիրով, այդ է այն հրաշալի էներգիան, այն մղիչ շուրթն, որ կը շարժէ գաղափարի ծանր մեքենան: Վայ է նրան, որ կիսթարկուի յոռեանութեան թունալարող ազդեցութեամբ, որը որեւէ թայն անելու անընդունակ քարձնելուց յետոյ, կրածացնէ մարդու ինչպիսի մասնաւոր, անհատական կեանքն էր:

Այդ է իմ հասկացողութիւնը և ըմբռնումը, որ ունեւ դէպի ընկերը, այդ է ևս իմ տածած զգացման ընթերցող դէպի Ձեզ. իսկ այն բոլորի հետ որոնց անկաբող եմ վառուել և սիրել, անկարող կը լինեմ նաեւ որեւէ իրաբարութեանը, որեւէ արիւնքութիւն ու նենայ նետները: Իմ մէջ անտանելին այն է, որ ես միջին ճանաչար, չունեմ, կոմպրոմիզներ: անընդունակ եմ ևս անկարող. Գաղափարս պարզ կոտեւ ևս եթէ մէկից պիտի երեւ ճարձնել, այդպէս էլ կանեմ, պատեց զիս, և նըկատումի:

Իսկ այն թէ վաղուց ծրագրուած է եզեր Հեքթուածի կողմէ այս արիւնալի շարքը պիտի լը, ահա ատոր ալ իբր պայցայց մէջ կը բերենք նոյն այդ նամակի (գրուած 1903 Փետր 17/2 Մարտին) հետագայ տպերը, որանք ցայտուն կերպով վեր կը հանեն նոյնպէս Սադուլի անվեհեր հոգին:

«... Ինչպէս որ վաղուց Գիւլիւն ուզել են իրենց ժողովուրդը ծախել, թէև «արիկայ» անուանած Դամբուրաջանը այնքան քաղութիւն չէ ունեցել, սակայն վճիռը մնում է վճիռ ևս պիտի գործադրեն, եթէ կարողանան: Նոյնպիսի վճիռ կայացած է Աւետիսի համար, որին վաղուց հետէ զգուշացրել եմ, թէև չգիտեմ ի՞նչ խելքով վերջիս նրանցից հերկուսին ընդունել է իրա մօտ տեսնելու, ինձ վրայ դեռ մեր Պատգ. Ժողովի ժամանակից (նախկին ժողովը. — Թ՝ Խ) առում են կրճատողներ: Եղիւրդ Կրեւուած է մեր ձեռքը անցած գոհունակութեանց այդ «սրիկայ» կոչված ինչ նից դուրս է գալիս վաղուց նրանց աչքին փուշ է դարձած եղիւր փակ վերջերը այստեղ ունեցած իրենց բարձր ոմոպողութիւնները բարձրագույնպէս ինձ է վերագրուած ևս վաղուց հետէ

13 տարի է, ես ներքաւ Հնչակ.

վճարած է եղել այդ ջարհիլը ու գլխաւոր խոչնդոտը վերացնելու հնկերնեւրը ցարդ ինձ զգուշացնելու համար սասանեակ հեռագրի են տուել, մի քանի այնքան էլ նամակ գրել. իսկ մի երկու շաբաթ առաջ ուղարկելն ընկերներին երկուսին ուղարկել, որ ինձ պաշտպանեն: Աչքներս լը՛յս, գրեցի անմիջապէս որ այդպիսի բան չանեն. եթէ կտոր կտոր էլ անելու լինէին, ես չէի կարող մի վայրկեան անգամ ինձ թող տալ թիկնապահներով ման գալ... ինչոր է, նորից վճիւր մնում է, պիտի գործադրեն՝ եթէ կարողանան: *)

Տխուր իրականութիւն:

Այո՛, գործարքեցիկ անոնք... Թէև այդ թրքական անարգ գործակալներուն հաւատարիմ գործակալները զեռ կը յամառին անմեղի դիմակը կրել ուրիշներու վերագրելով այդ քստմնելի եղբունը... առանց վայրկեան մը իրենց ոճրագործի դէմքը նկատելու...

Զգուշութիւն...

ՍԱԳՈՒՆԻՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Նախորդ երեքշաբթի, 14/27 Հոկտ., Լոնտոնի մեր ընկերներէն ստացուած հեռագրի մը կը գուժէր մեր պաշտելի ընկեր Սաֆուհի մահը, որ տեղի ունեցեր է երկուշաբթի գիշեր, ժամը 8 1/2-ին, իր տան դրանը առջև: Ոճրագործին կողմէ արձակուած ատրճանակի հինգ հարուածներէն երեքը արդէն բաւական են եղած տապալելու մեր հսկայ ու քաջասիրտ ընկերը: Ոճիրէն անմիջապէս յետոյ կառավարութիւնը փոխադրած է զայն հիւանդանոց, ուր քիչ յետոյ հոգին աւանգած է յեղափոխութեան անարգ վիժուածներու, — Վերակ: Հերձուածի, — զոհը եղող մեր տարաբախտ ընկերը:

*) Այս տրուած վճիռներու գործադրութեան միջոցները որոշելու համար է որ այդ քանի մը սողունները « պատգ. ժողով » անունին տակ ճաշարուած էին Լոնտոն, ուսկից հիմա խոյս տուած են... գողերու նման:

Նկատողութեան առնուած մէկ քանի կարևոր պարագաներէ կեդրակացուի թէ այդ ոճրագործը, որ սպանութեան վայրը թողած է իր ամերիկեան գլխարկն ու ատրճանակը, նոյն այն անձն է եղեր, որ մեր ընկեր նազարէկի վրայ սպանութեան փորձը կատարած է:

Այս տխուր դէպքի առթիւ եւրոպական մամուլը, մանաւանդ Անգլիական օրաթերթերը՝ The daily Chronicle, Daily Mail, The Echo, The Standard, The Sun, The daily Telegraph և այլն, այդ հաշուադէպ ոճիրի յաջորդ օրը իսկ ընդարձակ նկարագրականներով և յօդուածներով մանրամասն խօսած են Սաֆուհի անձին, Հնչ. Կուսակցութեան մասին և նորկանքով նկարագրած՝ 96-էն յետոյ պատահած բոլոր անցքերը, մասնաւորապէս Արիիարեան դաւաճան խմբակի արարքները (անուանելով անոնց հեղինակները թրքական գործակալներ), Միութեան ծրագրուած դաւը և Ամերիկայի մէջ այդ Հերձուածի հաւաքած ու ուլ տուած տարները, որոնց մասին համառօտ ամփոփում մը ընելու համար իսկ տասնեակ « Երաժշտութիւն » խաւըով էջերը անբաւական են:

Այդ վարչելի տիպերը հայութեան առջև վարկաբեկուելէ յետոյ իրենց այս գաղանային ու ճիրովը առիթ տուին եւրոպական Մամուլին նշառակելու գիրենք ամբողջ քարաքակիրթ աշխարհին առջև ալ: Ատոնք ո՛չ թէ հայութեան, այլ ամբողջ մարդկութեան մէջ իսկ տեղ չունին այսուհետև... Թեքս անոնք առատ նիւթ մատակարարեն Լօմպրօզի գիտական հետադասութիւններուն, որ անոնց մէջ պիտի գտնէ անշուշտ ոճրագործներու նոր քաթէկօրի մը:

Անգլիոյ պէս ազատ երկրի մը մէջ կատարուած այդ անլուր և քստմնելի « քաղաքական սպանութիւն » խորագրէս յուլած ու տեն-

դոտ հետաքրքրութեամբ զբաղեցնել տուած է թէ՛ Մամուլը և թէ՛ Կառավարութիւնը, այնպէս որ լրագրութիւնը արդէն բացարձակապէս յոյս յայտնած է որ դժուար թէ ոճրագործը յաջողի ճողալով ոստիկանութեան ձեռքէն:

Եւրոպական թերթերու տուած հեռագրական վերջին տեղեկութեանց համաձայն ոճրագործը արդէն ձերբակալուած է Անգլիայէն Ամերիկա ճամբորդելու համար նախ նստած պահուն: Հերձուածի այդ հաւատարիմ գործիքին անունն է եղեր Գրիգոր Վարդանեան:

ՆՄՈՒՇՆԵՐ ՌՈՒՍ ՊԱՇՏՈՆԱՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻԾ

(Շարունակութիւն եւ վերջ)

Մինչև այժմ մեր եկեղեցիին ու հանգստարանը պիղծ ժանտարմենքի ու ոստիկանների երես չէին տեսել. — ահա՛ մի ամբողջ ամիս է, ինչ եկեղեցու մէջ ժողովրդի վրայ կը հսկէ ժանդարմը կամ ոստիկանը... Ձեռք կարող մեր ննջեցեալը հոգին յանձնել Հայոց գերեզմանատանը՝ առանց ոստիկանների կամ ժանդարմների, վասն զի Ոստիկանապետը նախագապետից թոյլուլութիւն է դուրս բերել հսկելու հայերի վրայ գերեզմանատանը, որպէսզի այնտեղ ճառեր չըսուեն... ազգի կենաց շտապարկէն... որպէսզի յեղափոխական գրկերի (այրուածների) գերեզմանների վրայ հազեհանգիստ չը

*) Կարգալ մեր յօդուածները այդ առթիւ « Ե. Հ. » մէջ, Այն հայերը, որոնք գնացել էին Օդեսա, 29-ի ուսմբերի պայթիւնից անձնացած հրդեհին զոհ գնացող հինգ հայ երիտասարդ յեղափոխականների յուղարկուելու թեանը, դատի մասնակցան... իսկ վարժուէի օրերը Մէլի-Յովսէփեանը անմիջապէս քուլեց այստեղից: Մ. Յ.

կատարուի և վերջապէս օրննչտան, որպէսզի ննջեցեալին հողի յանձնելու պատրաստակով չըհաւաքուին հայերը հակապիստիան, հակառուսական ցոյցեր անելու համար... Այդպիսի մտացածին, ֆանտաստիքական ենթացութիւններով, — որոնք կարող են ցնդած վրացու ուղեղից բլլել, — գաղան ոստիկանապետը հանդերձ իւր օգնականով, իսկ բարբարոս լեհ սպայ Լեիցիին՝ իւր շրջանում, կարողացան ձերբորդիւրախարհահանգապետին զբաղուել Կարսի նահանգի անբողջ հայ ազգաբնակչութեան դէմ:

Ամերիկայից եկել էին երեք հայեր, որոնք ունէին ամերիկեան հպատակութեան համար թըլթեր ու անցագրեր: Ոստիկանապետը կամենալով նրանցից մի խոշոր գումար շորթել, մի քանի օր իբրեւ հայ յեղափոխականներ բանտում պահելուց յետոյ նըրանց՝ արձակեց... որպէսզի Հէնչնոյն օրը հեռանան քաղաքից... Այդ տեսակ բաները սովորական են. այդ նպատակով պահում է գիծ Միխակօն վրացի և յոյն հայազէտ ծառայողներ, որոնք գայլերի պէս՝ ամեն նորեկ հայի օձիքից պինդ բռնելով տանում են ոստիկանապետի մօտ: Սկսում է դժբաղդ հայի համար սոսկալի տանջանքների շարքը, մինչև որ... պիղծ բերանները քաղցրանան...

Գիծ Միխակօն, որը իւր պաշտօնավարութեան ժամանակ Արդահանի շրջանի Փոխով գաւառակում, իւրացնում է 7 տարի սրանից առաջ այդ գաւառակի ժողովրդից հաւաքած զանազան պետական տուրքերը, — մօտ 9 հազար ռուբլի մի գումար, — և իւր կառավարութեան շինութիւնը հրդեհում, մոխիր դարձնում... դատի է մատնվում այդ գումարը սեպհականացնելու համար: Սակայն իւր կաշառած ըստորին ծառայողների վկայութիւններով նա ազատուեց խիստ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ի 18

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ
ՊԵՏՅՍՏՐՈՒՆԸ
Քարգանակեց Ըրաւետեան
Ա. Տ-եան

ՀԱՄԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Communisme)

Իրաւունքներու կողքին, սօցիալիստները պարտաւոր են նաեւ ցոյց առ պարտականութիւնները: Կեանքի հաճոյքները պէտք է ըլլան աշխատանքի և ջանքերու դիմը: Ամբողջովին զեղիւթութիւններու, զգայնական հաճոյքներու ու ծուրութեան նուիրուած կեանքերու վատթար տեսարանը պէտք է խնայել ապագայ սերունդներուն: Պիտի գալ օր մը երբ պիտի խօսին ընկերական աշխատանքի ձրիակերներու մասին, — որոնք այսօր այնքան բարձր կը դասուին եւ կը յարգուին, — նոյն արձամարձանքով, որ մենք կը տածենք այսօր դէ-

պի գող-ասպետները, որոնք Միջին-գարու մէջ մեծ յարգանք կը վայելէին եթէ ինչպէս որ կուզեն համայնականները, գոհացում տրուի այսօրուան շահագործողներու բոլոր պէտքերուն, այն ատեն անոնք պիտի շարունակեն անպատիժ կերպով իրենց անառակ և անգործ կեանքը, երբէք ձեռք չպիտի զարնեն աշխատութեան, որովհետեւ առանց ատոր ալ իրենց փախաճանքներուն գոհացում կը տրուի: Ստիպելով զանոնք աշխատելու, արդիւնաբերող մարդոց թիւը պիտի աճի, եւ այդ այնքան աւելի, որ զօրքի եւ ոստիկանութեան ակամայ անգործութիւնը զգալի կերպով պիտի նուազի: Աշխատութեան ոյժի կորուստը որ առաջ կուգայ վաճառականութեան մէջ գոյութիւն ունեցող միջոցների և այն խնամքների, որ արտօնուած մասնատու ընտանեկան յարկերու տնարարութիւնը կը պահանջէ, արդէն նուազելու վրայ է բոլոր այս պատճառները պիտի աւելցնեն արդիւնաբերութիւնը, եւ ատով կարելի պիտի ըլլայ աւելի լաւ գոհացնել պէտքերը:

Հիմայ արդէն ճանապարհները, հասարակաց պարտէզները, լոյսի և ջուրի բախումը, փարօները, ծովային աշխատութիւնները, միւղէները, գրադարանները եւլն, օրինակներ են պէտքերու համեմատ ծառայութիւններու բախման: Նամակներու փոխարկութեան համեմատ գիները, շոգեկատքերու համար իւրաքանչիւր սահմանի վարձացուցանելը աստիճաններ են դէպի այն դրութիւնը, ուր պէտքերու գոհացումը իրեն անձան չպիտի ունենայ գործածութիւնը: Մեր գրադարանները և գիտական դասախօսութիւնները գլխաւորաբար ձրիապէս դրուած են բնութանորի տրամադրութեան տակ: Նոյնպէս ազատան մակոյնները և հրդեհի շրջանները օգնութեան կը հասնին անոնց պէտք ունեցողներուն: Կը խնամեն կրթիւթըն ու համբըրը, յիմարեն ու ապիկարները տղաքներն ու ծեքերը, ո՛չ թէ սրովհետեւ անոնք կաշխատին, այլ սրովհետեւ մեր օգնութիւնն ու սպառնալու թիւը անոնց սննդամեջու են: Այս ուղղութեամբ շատ բաներ կ'են

եւս պիտի ըլլան: Սասնվիճելի է որպէսզի կը սպառնան համայնականութեան ոչ միայն արդիւնաբերութեան վերաբերմամբ, այլ նաեւ ընկերական հարստութիւններուն բախման մասին: Անոր ազդեցութեան շնորհիւ մեր եւսական անհատապաշտութիւնը տակաւնի պիտի տայ մարդկային համարաշխութեան, որ հսկայ քայլեր առնել պիտի տայ քաղաքակրթութեան Արդի անխնայ վիճակի անկարգութիւնէն պիտի ծնի ներգայնակութիւնը: Բայց ասիկա չպիտի կատարուի մէկ օրուան մէջ: Որպէսզի կատարուի եղբայրակցութիւն մը կարողանա թաղաւորել մարդոց մէջ անիրաւութիւնն ու ընչասիրութիւնը, որոնք այնքան խոր արմատ ձգած են միւրտերու մէջ, պէտք է արմատախիլ ըլլան:

(Շարունակելի)

պատժից, որպէս թէ փողը սը-
խալմամբ թողած լինելը կառա-
վարութեան գոյութիւնը չունիցող
կառավարութեան... Իսկ այսօր ընդա-
մենը երեք տարի է, որ նա կար-
սի ոտակահանապատի պաշտօնն է
վարումը՝ շնորհիւ իւր ազգակից
բարձրաստիճան պաշտօնեաների-
նե ալիք մարդը այս տարի Յու-
լիսի 29-ի հրդեհին զոհ լինելուց
նստակահանական կառավարութեան
չինութիւնը, — որը մի հայի է
պատկանում, — և ընդ որոք զործերը
... ու ինքը անպատիժ կերպով
չարունակում է իւր պաշտօնը...

Թեքեա հարցնէք ինձանից
թէ ի՞նչ եղաւ Շարիֆի սպանու-
թեան գործի քննութիւնը: Պա-
տասխանը պարզ է: փոխանակ
յանցաւորին բռնելու կամ հետա-
մուտ լինելու նրան՝ ոտակահա-
պետը համոզում է նահանգապե-
տին թէ միակ միջոցն է, — որ-
պէս ի հայերը իրենք գան և
ներկայացնեն յանցաւորին, —
Լուսիս-Մէլիքեան փողոյի վրայ
գտնուող հայ վաճառականներին
բանտարկել կամ աքսորել խիստ
տանջանքներու ենթարկելով նը-
րանց: Ի՞նչ ասել կուզի որ վերջինս
էլ (նահանգապետը) կառավարչա-
պետի հաճութիւնը ստանալով ան-
միջապէս թող է տալիս ոտակահա-
պետին գործելու իւր ուզածի պէս
... Եւ ահա՛ մեր գիծ վրա-
ցին, հրամանը գրպանում դրած,
ստորին ոտակահաններին լցնում
է քաղաքիս մէջ ձեռքակալելու
այն անձերին, որոնք իբր թէ

տեսած կարող են լինել կամ
նոյնիսկ գիտեն, ճանաչում են յան-
ցաւորին, որը փողոցում զարկել
սատկեցրել է յայտնի կարսեցի
հարուստ և զօնուշիկ թիւքթա-
րիֆ-բէկ անունով ճիւղիւն ու
վերաւորել մի ուսու ստորին ու-
տիկանի, որը կամեցել է բռնել
յանցաւորին: Մատնիչներ
ցուցմունքներով մի օրուայ մէջ
կալանաւորում են 24 հայեր ու
առաջնորդում ուղղակի բանտ: Այդ-
անմեղ, անտեղեկ անձերի թուում
կան այնպիսիներ, որոնք ի-
րենց բազմադարձ ընտանիքը
թողել են օրական չոր հացի կա-
րօտ կամ խորին զառամութեան
պատճառով դուցէ չը կարողա-
նան տանել բանտային անտա-
նելի կեանքը և իրենց հոգին
փշին հէնց բանտի չորս պատերի
մէջ... Պատկերը կատարեալա-
նելու համար նոյնիսկ կալանա-
ւորում են և բանտը գցում մի
14—15 տարեկան ուսումնարանի
երեխայ՝ իւր հօրեղբոր հետ...
Շատերը բազմաթիւ խնդրաքեր
են ներկայացրել զանազան հաս-
տատութիւններին ու պոչուտնա-
տար անձերին՝ նահանգապետին,
քննչին, դատախաչին ելլին, և ին-
ժայց ցաւելով պէտք է արձա-
նագրենք այսօր, որ նրանց
արդար քանդատենք, տրտուել-
ների վրայ ո՛չ մի օւշադրութիւն
գարձնող չըկալ: Բոլոր խնդիրք-
ները մնացել են և մնում են ա-
ռանց հետեւանքի... Պճայն բար-
բառոյ յանապատիս...

Ահա՛ այն անմեղ հայերի
ցանկը, որոնք Շարիֆի սպանու-
թեան համար բանտն են նետ-
ւել, ուր մինչև օրս էլ տանջում
են առանց կարևորութեան ի-
րենց սիրելիներին, հարազատնե-
րի երեւոյ: 1) Սիմէօն Ալոյեան,
2) Ռուբէն Արսէնեան Ալոյեան,
14—15 տ., 3) Նազարէթ մահտ-
Գրիգորեան, 4) Գալուստ մահտ-
Պապիկեան, 5) Արտաշէս Տէր-
Պոզոսեան, 6) Յարութ. Արար-
եան, 7) Յովսէփ Միւլքիյանեան,
8) Աւետիս Բէգլարեան, 9) Ռը-
կրլուի Շահպաղեան, 10) Մար-
տիրոս Կիրակոսեան, 11) Յարութ.
Պապիկեան, 12) Մելիք Յովհան-
նէսեան, 13) Խաչատուր Մկրտիչ-
եան, 14) Մարտիրոս Այվազեան,
15) Գէորգ Յակոբեան, 16) Ար-
մենակ Յակոբեան, 17) Պետրոս
Վարդեան, 18) Գրիգոր Բոստան-
ջեան, 19) Կարապետ Յակոբեան,
20) Մելիքսեփ Պալոյեան, 21)
Մանուկ Աբրահամեան, 22) Սար-
գիս Յովհաննիսեան, 23) Ալեքսան-
դրը Մադոյեան և 24) Նազարէթ
Դիւրգարեան:

Կարս Հանայակ Դիւրգարեան

ԿԵԱՆՔԻ ՀԱՆՍՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Բոլոր և և րոպական մեծ պե-
տութիւնները միջոց և հանապազ
կրկնում են թէ թուրք կառա-
վարութիւնը միանգամայն անըն-
գունակ է և չէ կարող ընդհարմ-
ներ մտցնել իր երկրներում: Բայց

և միևնույն ժամանակ շարունակ
գիտում են ու պնդում այդ նոյն
աստիճանակ և կառավարութեա-
նը, որ նա այս կամ այն բարե-
նորոգումները մտցնել իր երկրի
զանազան մասերում: Արգեօք
դրանք ուրիշներին են ուղղում
խաբել, եթէ ոչ ինքնախաբէու-
թեամբ են պարագում:

Պետր Կարապետը գիտելի է
Սերբիական թագաւոր ընտրե-
լուց անմիջապէս յետոյ, Ռուսաս-
տանի մեծ ապուշը (Յարը) առա-
ջինը շնորհաւորեց և իր ուրախու-
թիւնը յայտնեց այդ առթիւ, բայց
և միևնույն ժամանակ բուռն ցան-
կութիւն յայտնեց, որ ամենա-
խիստ կերպով պատժեն Ալեք-
սանդր Օբրոնովիչին պանտոնե-
րը, այսինքն այն անձերը, որոնց
կատարած սպանութեան շնորհով
էր հէնց որ Պետրը Սերբիական
գահը բարձրացաւ: Սա արգէն
կեանքի հակասութիւնն է. այլ
ապուշի տրամաբանութիւն:

Պոռնիկ Եկատերինայի թա-
գաւորութեան օրով Ռուսաստա-
նում մէկ անգամ հարց էր բար-
ձրացել ռամիկ ժողովրդի մէջ
գրագիտութիւն տարածել և թա-
գակիր պոռնիկը այդ խնդիրը
լուծեց հետեւեալ նշանաւոր խօս-
քերով՝ «գրագիտ ժողովուրդը
ի՞նչպէս կարող է լաւ հպատակ
լինել: Այդ ժամանակից Յա-
րերը մի առանձին հաստատութե-
ութեամբ էին հետեւում իրենց տա-
տի թողած աւանդին, բայց վեր-
ջին տարիներս, նկատեցի՞ որ

12

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԿԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ
ՊԱԼԲԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՒՆ ՄԷՋ

Բայց, քանի որ կոյր եւ անողոք
տէրութիւնները աւարտու անպոնդին
առջեւ կանգնած կը թողուն Պալկա-
րիան ու Մակեդոնիան եւ ամէն վայր-
կեան անոնց բազմին հետ կը խաղան,
ուրեմն մենք այ ուշադրութեան առ-
նենք այս բոլորը եւ ասկէ ստանանք
պէտք եղած դասը, որուն պէտք պիտի
ուենանք յառաջիկային:

Նախ եւ առաջ հարցնենք թէ ո՞վ
է այն շարակամ դեւը որ այս օրուան
խղճալի վիճակին բերաւ Պալկարիան,
Սերբիան, Յունաստանը եւ Ռուսա-
նիան: Ռուսական եւ Յարապական դի-
ւանագիտութիւնը չէ՞ միթէ, — Այո՛,
բայց անիկա վերի հարցման պատաս-
խանին կէսն է միայն: Երկր է որ
առասական, աւստրիական եւ գերմա-
նական դիւանագիտութիւնը գործա-
նեցին եւ կը գործածեն ամէն տեսակ
միջոցներ վերոյիշեալ տէրութիւնները
սկարացնելու եւ իրենց ձեռքը կոյր
գործիքներ դարձնելու համար, բայց
չառ աւելի ձեռք է որ այս անսիրտ
դիւանագիտութիւնը չէ կրցած ինքն
իրեն ուղղակի գործել: Անիկա գործ-
ած է իր գործակալներուն միջոցաւ,
զորս ընտրած է նոյնինքն Պալքան-
եան թերակղզիի պետութիւններուն
մէջ: Ռուսական եւ Երոպական դի-
ւանագիտութեան այս կոյր եւ կաշտ-
ուած գործակալները Պալքանեան
թերակղզին կառավարող կուսակցու-
թիւնները եւ բուրժուազիան են, որոնք
առաջնորդած են եւ կառավորեցին ի-
րենց քաղաքականապէս եւ տնտեսա-

պէս գերի ազգերուն բազմը: Այս կա-
ռավարող դասակարգերը, բաժնուած
զանազան կուսակցութիւններու և
ձարաւի մշտնջենական տիրապետու-
թեան և կողոպուտի, ամենախայտա-
ռակ «զաշնակցութիւններ» կնքած
են Ռուսիոյ և Աւստրիոյ հետ, որ-
պէսզի հասնին իրենց մեծամոլայեան
խաբաններուն և ձգտումներուն, ո-
րոնք կը կոչանան «Մեծ Սան Սթե-
ֆանեան Պալկարիա», «Մեծ Սերբիա»,
«Մեծ Յունաստան» ստեղծելու մէջ:
Աւստրիա եւ Ռուսիա միշտ պատրաստ
են այդօրինակ դաշնակցութիւններ
ընելու այս փոխօրինակներու հետ, բայց
ոչ թէ անոնց զառանցական իտէալնե-
րուն իրականացման, այլ իրենց ծրա-
գիրը գործադրելու համար: Միթէ
զարմանալի՞ է, եթէ այսօր աւելի
խորամանկ եւ զօրաւոր աւազակներ
(Ռուսիա եւ Աւստրիա) ո՛չ թէ միայն
բաժին չեն հաներ ապագայ որսէն
(Կուրբիա) իրենց տկարամիտ եւ ան-
զօր «զաշնակցներուն»: այլ և
նոյն իսկ իրենց աւազակային թա-
թերը կը դնեն անոնց մողորած գլուխ-
ներուն վրայ, իբր իրենց օրինաւոր
որսը?!

Այս կերպով պալկարական, սեր-
պիական, յունական եւ ռուսական
«մեծ հայրենասէրները», յանուն «ազ-
գային մեծ իտէալներու» իրենց ազ-
դեքը վերջնականապէս կողոպտել է
սկարացնելէ, զանոնք ռուսական եւ
Երոպական դրամատուները գրաւա-
կան դնել յետոյ, որպէսզի անագին
բանակիւ մակարոյժ պաշտօնեութիւն
մը պահեն եղբայրասպան պատերազմ-
ներու եւ չօվինիստական բրբաբկան-
գաի համար՝ այսօր, իրենց սկարա-

ցած ազգերը մեր պաշտպաններուն» եւ
«փրկարարներուն», — Ռուսիոյ եւ
Աւստրիոյ, — արեւտու ձեռքը կը
յանձնեն անամօթ եւ անխիղճ կեր-
պով:

Ըսէ՞ք, Աստուծոյ համար, ասկէ
աւելի լրբութիւն և շարակալութիւն
կրնայ ըլլալ...:

Ուրեմն, ո՞ւր պէտք է փնտռել
փրկութիւնը:

Պալքանեան ազգերու փրկութիւ-
նը միմիայն տնտես աւելի շուտ արթըն-
նալուն և ռեկ ընդհանուր պայմանեան
դաշնակցութիւն կազմելուն ռեկ կը կա-
յանայ: Որքան աւելի շուտ պալքան-
եան ազգերը սթափին մեծ իտէալ-
ներու զգլխիչ չօվինիստական կառա-
ղութեան, օճիքներն ազատեն ի-
րենց երգուեալ թշնամիներէն, — Ռու-
սիայէն, Աւստրիայէն և զիրենք կա-
ռավարող կուսակցութիւններէն և
կազմեն ընդհանուր դաշնակցութիւն
մը, որ իրենց ծառայէ իբր ա-
մուր վահան բոլոր արտաքին ու-
տընձգութիւններու դէմ, ուրիշ որ ալ
գան առանք, — այնքան աւելի շուտ
պիտի կրնան ազատել իրենց գերի
հայրենակիցները, միացնելով զանոնք
իրենց դաշնակցութեան, եւ այնքան
աւելի լաւ պիտի կրնան ապահովել
իրենց խաղաղ տնտեսական եւ քաղա-
քական զարգացումը, որուն վրայ այ-
սօր այնքան մտաթ ու խուսար ամպեր
պիղուած են...:

Վերջապէս, որքան աւելի շուտ
կործանի ռուսական արիւնտ տեսք-
թիւքը, որ կը խեղդէ իր սառն բա-
զակներուն մէջ հարիւր միլիոնաւոր
ռուսական ազգ մը եւ որ իբր արտա-
նակտն ապատած մը կարողութեամբ կը մը-
նայ պալքանեան ազգերու գլխուն վը-

րայ, պատրաստ ամէն վայրկեան ա-
նոնց վրայ գլատելով, այնքան ա-
ւելի շուտ պիտի ազատուին, պալքան-
եան ազգերը Ռուսիայէն՝ այս պրի-
նարբու դազանէն, որ իր ամէն քայ-
լին զանոնք կը փնտռէ:

Գործել ամէն միջոցներով ճշուած
եւ շահագործուած բանտը զնդան-
րութեան աւելի շուտ արթնալուն,
զարգանալուն ու կազմակերպելուն,
եւ առաջնորդել զանոնք այն պայմա-
րին մէջ զոր կը մղեն ամէն տեսակ
գերութիւններուն դէմ՝ տնտեսական
թէ քաղաքական, որոնք «գոյն» թիւն
ուենին եւ կը պաշտպանուին տիրա-
պետող կապիտալիստական դասակար-
գերէ առջի բուրժուազական ընկերու-
թեան մէջ, — ահա այս է պալկա-
րական, սերպիական, ռուսական եւ
յունական Սօցիալ-Դեմոկրատիայի է՛ն
մեծ նպատակը! Իր այս սրբազան սրայ-
քարին մէջ, անիկա առաջնակին չլիտի
մնայ ռուսական, գերմանացիական ուս-
տրիական՝ մէկ խօսքով՝ ամբողջ մի-
ջազգային Սօցիալ-Դեմոկրատիայի, որ
իբր ահաւելի հրաբուզի մը, կրկնաւ
պիտի սպանական կերպարանք կանխ-
եւ ներկայ յափտակալական գրութեան
նոյնիսկ հիմքը կը սարսէ, մինչև որ
օրմը անլուր զօրութեամբ պայթի ան
և աշխարհի վրայէն անլէ ամէն տե-
սակ տնտեսական եւ քաղաքական գե-
րութիւն:

B. Савъ*) Վ Ե Ր Ջ

*) «Новое Време» VII г. 1903, февр.

